կարող էի միշտ ինքս հասկանալ, ինքս քննադատել: Նա ասում էր, որ այդ անապատը առաջ կպած էր ցամաքին, յետոյ ծովի ջրերը բաժանեցին նրն եւ կղզիացրին: Նա ցոյց էր տալիս այն նեղ հրոանդանը, որ արագիլի կորածեւ պարանոցի նման երկարացել էր ծովի մէջ: Այդ հրոանդանը կոչւում է «կռապաշտնոցէ: Մի ժամանակ նրա վրայ եղել է կռապաշտների մեհեան: Հրոանդանի ուղիղ գլխի հանդէպ գտնւում է կղզին եւ այդ պատճառով էլ կոչւում է նա «Կտուց», որովհետեւ արագիլի գլխից կտրոած կտուցի նմանութիւն ունի: Ես հարցրի Ասլանից, թէ ինչպէս է պատահել, որ նա կտրոել է: Նա բացատրեց, թէ ծովակի ջուրը դարերի ընթացքում հետզհետէ բարձրացել է եւ ողողել է իր եզերքը. շատ նշանաւոր տեղեր եւ շինոածքներ, որ պատմութեան մէջ յայտնի էին, այժմ կամ իսպառ ծածկոել են ջրի տակը կամ, ցամաքից կտրոելով, կղզիացել են: Նա օրինակ բերեց Արճէշ բերդաքաղաքը, որ այժմ չորս կողմից առնոած է ջրով եւ նրա ամենափոքրիկ մասն է միայն երեւում, եւ խոստացաւ ցոյց տալ ինձ Աղթամար կղզու վրայ գտնոած Արծրունի թագաւորների պալատները, որ այժմ կորած են ջրի տակ: Ես շնորհակալութիւն յայտնեցի, խնդրելով, որ բացատրէ ինձ, թէ ինչպէ՞ս զարգացաւ հայերի մէջ անապատական կեանքը, ինչո՞ւ մարդիկ թողեցին աշխարհը եւ առանձնացան անապատների ամայութեան մէջ:

Ասլանը այդ մասին թէ՛ այնօր ճանապարհին, եւ թէ՛ ուրիշ ժամանակ, շատ բան էր խօսացել ինձ, եթէ բոլորը գրելու լինեմ, մի ամբողջ գիրք կը դառնայ. ես կը դնեմ այստեղ այնքանը միայն, որքան վերաբերում է մեր տեսած Կտուց անապատին եւ Վանայ ծովակի մէջ գտնոած միւս երկու անապատներին, որ կոչւում են Լիմ եւ Աղթամար:

Պէտք է որոշենք միմեանցից, ի՞նչ է վանքը, ի՞նչ է անապատը:

Մեր հայրենիքում վանքերը եղել են սկզբում մի տեսակ հոգեւոր-բարեգործական հիմնարկութիւններ: Նրանք ծառայել են իբրեւ դպրոց, ծառայել են իբրեւ հիւանդանոց կամ ուրկանոց, ծառայել են իբրեւ աղքատանոց, ծառայել են իբրեւ իջեւան ճանապարհորդների համար եւ մեր լեռնային երկրի ամենադժոարին տեղերում, ձմեռային ամենասաստիկ ցրտերի ժամանակ, պատսպարան են դարձել օտարներին ու պանդուխտներին, մի խօսքով, վանքերը ունեցել են իրանց մարդասիրական նպատակները, որոնք, դարերի ընթացքում կերպարանափոխոելով, հետզհետէ շեղոել են իրանց իսկական նշանակութիւնից եւ, վերջապէս, անօգտաւէտ են դարձել:

Վերոյիշեալ նպատակների համաձայն, վանքերը կառուցւում էին այնպիսի տեղերում, որ աւելի հեշտ հաղորդակցութիւն ունենան մարդիկների եւ աշխարհի հետ, որ կարողանան ծառայել իրանց նշանակութեանը: